



Ամերիկայի Արևելեան թեմէն ներս

ՆԱԼԴԻՊՈՒՄ ԱՄՆ-Ի ԴԵՍՊԱՆ ՃԱՆ ՕՐՏՈՒԷՅԻ ՆԵՏ

Երեքշաբթի Յունուար 13, 2004, երեկոյեան ժամը 8.00-ին, Ամերիկայի Արևելեան թեմի Առաջնորդարանի Նայկ եւ Ալիս Գալուքճեան հանդիսարանին մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ Նայաստրանի Նանրապետութեան ԱՄՆ-ի դեսպան Ճան Օրտուլչի հետ:

Այս հանդիպումին ներկայ գտնուեցան մօտ 200 հոգի:

Յարգելի Դեսպանը իր խօսքին մէջ քանի մը անգամ կրկնեց, որ Սփիւռքի հայերը, մասնաւոր գործարարներ, ներդրումներ պէտք է կատարեն Նայաստրանի մէջ: Ըսաւ, որ Նայաստրանի անկախութենէն ետք ԱՄՆ-ի դեսպանապետը նպաստած է երկրի տնտեսութեան յառաջդիմութեան, ոչնչ ապեն օգնած է, որ Նայաստրանի արտադրութիւնները արտածուին: Նակառակ ձեռք բերուած կարգ մը յաջողութիւններուն՝ Նայաստրանի Նանրապետութիւնը փակաւին կարիքը ունի Սփիւռքի օգնութեան:

Ան ըսաւ, որ Նայաստրանի առեւտրական օրէնքներուն մէջ կարգ մը փոփոխութիւններ պէտք է կատարուին եւ դրամատուները վստահութիւն ցուցաբերելով փոքր առեւտրական հաստատութիւններուն հանդէպ՝ պէտք է քիչ տոկոսով նիւթական փոխաւորութիւններ կատարեն: Նայաստրանի տնտեսական զարգացման նպաստելու համար Սփիւռքէն անհատ գործարարներ պարտին ներդրումներ կատարել եւ գործարարներ բանալ Նանրապետութեան մէջ: Այս ուղղութեամբ Պոսթոնէն դեսպան Օրտուլչի ընկերակցող Երեւանի «Արմենիա Մարիոթ Հոթել»-ի Նայ բաժնէկիցները պարմեցին իրենց ձեռք բերած փորձառութենէն:

Տիար դեսպանը ըսաւ, որ այս նպատակաւ Նայաստրանի կ'օժանդակեն Միացեալ Նահանգաց Միջազգային Զարգացման Գործակալութիւնը, որուն յաջող ջանքերով Նայաստրանի արտադրանքը կ'արտածուի աշխարհի զանազան կողմերը:

Միացեալ Նահանգաց կառավարութեան յայտագիրներուն առընթեր Սփիւռքի հայերը կրնան իրենց օժանդակութիւնը բերել Նայաստրանի տնտեսական զարգացման ի նպաստ, օրինակ՝ Նայաստրանի Օգնութեան Ֆոնդի միջոցաւ, որ Արևելեան թեմի Առաջնորդարանի մարդասիրական օգնութեան բաժանմունքն է: Տիար դեսպանը մեծապէս գնահատեց Նայաստրանի Օգնութեան Ֆոնդի կատարած օժանդակութիւնները:

Ներկաներուն կողմէ՝ ներկայացուած հարցումներուն գոհացուցիչ պատասխաններ տուաւ Դեսպան Օրտուլչի:

Թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան իր խօսքին մէջ ըսաւ. «Մենք՝ հայերս, Ամերիկայի այս ազատ ու պարեհութիւններ ընձեռող երկրին մէջ հասած ենք որոշ դիրքերու, որոնք մեզ կը հրաւիրեն որպէս ազգային պարպականութիւն, օգնութեան ձեռք երկարելու մեր Հայրենիքին: Գործարարներ պարպին օգտագործել Հայաստանի մարդկային ուժը եւ գործարարներ բանան, որպէսզի երկրի արտադրական կացութիւնը բարելաւուի: Իսկ անհարկ հայեր կրնան մասնակցիլ Հայաստանի Օգնութեան Ֆոնդի միջոցաւ կարարութեամբ օգտակար ծառայութիւններուն»:

Նախքան հրապարակային հանդիպումը՝ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան Առաջնորդարանի դահլիճին մէջ, ի պալլի դեսպան Օրպուէյի, կազմակերպած էր հիւրասիրութիւն մը, որուն ներկայ գտնուեցան Առաջնորդարանի Թեմական Խորհուրդի, Հայ Օգնութեան Ֆոնդի հոգաբարձութեան եւ Թեմական Պատուիրակի գրասենեակի անդամներ: Ծաշկերոյթի ընթացքին դեսպան Օրպուէյ զխաւորաբար խօսեցաւ Հայաստանի մէջ Հայ Օգնութեան Ֆոնդի կարարած գնահատելի աշխատանքին մասին:

ԴԻԲԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ